Թողարկման 19-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2012

Սեպտեմբեր

թիվ 9 (169)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Պետրոս-94» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա, «Մոբի Դրամ» ՓԲԸ-ին «Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Գ. Բաղրամյան և ընկերներ» ՍՊԸ-ի մասնաճյուղին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «ԷՆՋԻԷՍ Ֆինանս» ՍՊԸ-ին գրավատան կազմակերպման լիցենզիա տրամադրելու, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի մի շարք մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Թալին» ներկայացուցչությունը գրանցումից հանելու և «Թալին» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արեգակ» ՈՒՎԿ Հրազդանի ներկայացուցչությունը գրանցելու, ինչպես նաև տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 232-Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 228-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

6 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 234-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 9 պաշտոնական պարզաբանումը ««Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ»

13 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Պետրոս-94» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 235Ա):
- ***«Անելիք» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Մոբի Դրամ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 236Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Գ. Բաղրամյան և ընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաճյուղին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 247Ա):
- ***Գրավատան կազմակերպման լիցենզիա է տրամադրվել*** «ԷՆՋԻԷՍ Ֆինանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 252Ա):
- ***Գրանցվել են*** «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության «Էջմիածին», «Եղեգնաձոր», «Կապան», «Աշտարակ», «Նոր Նորք», «Արտաշատ» և «Աջափնյակ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/900Ա, 1/914Ա, 1/935Ա, 1/956Ա, 1/990Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Ֆինքա» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության «Թալին» ներկայացուցչությունը և ***գրանցվել*** «Թալին» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/988Ա):
- ***Գրանցվել է*** «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության «Դրմբոն» մասնաճյուղը (որոշում թիվ 1/989Ա):
- ***Գրանցվել է*** «Արեգակ» ՈՒՎԿ Հրազդանի ներկայացուցչությունը (որոշում թիվ 1/991Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 560000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/931Ա, 1/985Ա) և 6 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 1 գրավատան, 7 փակ բաժնետիրական ընկերությունների, 1 արտադրական կոոպերատիվի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/905Ա, 1/906Ա, 1/932Ա, 1/953Ա, 1/979Ա, 1/983Ա, 1/984Ա, 1/971Ա, 1/975Ա, 1/977Ա, 1/978Ա, 1/980Ա-1/982Ա, 1/976Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 232Ա որոշմամբ 2012 թ. սեպտեմբերի 4-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 10%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Ղեկավարվելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թ. հոկտեմբերի 22-ի ««Համահայկական բանկի լիցենզավորումը, Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու և ներկայացվող փաստաթղթերը, Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 01/02 հաստատելու մասին» թիվ 263-Ն որոշմամբ հաստատված «Համահայկական բանկի լիցենզավորումը, Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու և ներկայացվող փաստաթղթերը, Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 01/02-ի 2-րդ կետը «ներքին աուդիտի ղեկավարը և անդամները,» բառերից հետո լրացնել «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման գործառույթներ իրականացնող աշխատակիցը (ներքին դիտարկումների մարմնի աշխատակից)» բառերով:

2. Այն անձինք, ովքեր ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնին նշանակվել են մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի դրույթների համաձայն պետք է անցնեն համապատասխան որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում և գրանցվեն սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից եռամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 օգոստոսի 2012 թ., N 228-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. օգոստոսի 21-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.09.2012 թ. (ՀՀԳՏ N24 (437)[1], 18.09.2012):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 520-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը և 47-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը սահմանելու մասին» թիվ 520-Ն որոշմամբ սահմանված «Հարկադիր կատարողի կողմից պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում պարտապանի ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու նպատակով բանկերին ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ձևերը» հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1) Հավելվածի «Ձև 1»-ը և «Ձև 2»-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի (կցվում է),
2) Հավելվածի «Ձև 3»-ում.
   ա. «(քաղաքային, մարզային)» և «Առաջին ատյանի» բառերը հանել,
   բ. «արգելադրված միջոցներից» բառերից առաջ լրացնել «թիվ _____ հաղորդագրությամբ» բառերը,
3) Հավելվածի «Ձև 4»-ում և «Ձև 5»-ում.
   ա. «(քաղաքային, մարզային)» բառերը հանել,
   բ. «Միջոցները բացակայում են _____» բառերը փոխարինել «Չարգելադրված միջոցները բացակայում են _____ (թիվ _____ հաղորդագրության (հաղորդագրությունների) հիման վրա առկա են _____ արգելադրված դրամական միջոցներ)» բառերով:

(Ընդում է գումարի չափը)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
6 սեպտեմբերի 2012 թ., N 234-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 4-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 12.09.2012 թ. (ՀՀԳՏ N24 (437)[1], 18.09.2012):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի սեպտեմբերի 4-ի թիվ 234-Ն որոշմամբ

Ձև 1

Հաղորդագրություն թիվ _____
(ունիկալ համար)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ _____

Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին

__ _____ 20__ թ. ք. _____

ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____ /բաժանմունքի/

_____ ուսումնասիրելով __ _____ 20__ թ.
(պաշտոնը, անունը, ազգանունը)

հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը)

_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ _____ ընդհանուր գումարով դրամական միջոցների չափով
(գումարը թվերով) (գումարը տառերով) (արժույթը)

արգելանք դնել պարտապան _____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, իրավաբանական անձի անվանումը, ՀՎՀՀ, իրավաբանական անձի գտնվելու վայրը)

_____-ի բանկային հաշիվներում առկա և դեռևս

չարգելադրված դրամական միջոցների վրա, որից

_____ _____ դրամական միջոցները
(գումարը թվերով) (գումարը տառերով)

որպես կատարողական թերթով նախատեսված գումար և

_____ _____ դրամական միջոցները՝ որպես կատարողական ծախսեր:
(գումարը թվերով) (գումարը տառերով)

2. Բանկի անվանումը _____

Պարտապանի բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում արգելանք դնել պարտապանի այլ բանկային հաշիվներում, ավանդներում, «դեպո» հաշիվներում (ենթապահառուի գործառույթներ իրականացնող գործակալների/դիլերների կողմից վարվող «դեպո» հաշիվներ), ինչպես նաև մետաղական հաշիվներում առկա և դեռևս չարգելադրված դրամական միջոցների վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը:

3. Պարտապանի բանկային հաշիվներում, ավանդներում, «դեպո» հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում տեղեկացնել բանկում պահվող այլ ակտիվների առկայության մասին (արժեքը չի նշվում) և արգելանք դնել դրանց վրա:

4. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ և դրանց մուտքագրել _____ հաշվի համար(ներ)ից

(նշվում է բանկային հաշվի համարները)

հետագայում ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման, ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

5. Տեղեկացնել պարտապանի բանկային հաշվին կամ ավանդներին (ներառյալ՝ նոր բացված) հետագայում մուտքագրվող դրամական միջոցների (բացառությամբ սույն որոշման 4-րդ կետով նախատեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների), ինչպես նաև արգելանքից ազատվող այն դրամական միջոցների մասին, որոնք արգելադրված են եղել արգելանք դնելու մասին այլ որոշում(ներ)ով (նշելով գումարի չափը), և արգելանք դնել դրանց վրա՝ մինչև սույն որոշման 1-ին կետում նշված չափով ընդհանուր գումարի ապահովումը:

6. Արժեթղթերի հաշվարկի համար հիմք է ընդունվում դրանց անվանական արժեքը:

7. Պարտապանի արտարժութային միջոցների արգելանքի դեպքում արգելադրվում է տվյալ հաշվի արժույթով:

8. Մինչև արգելանք դնելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին, բանկին:

Որոշումը կարող է բողոքարկվել _____ դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

Հաղորդագրություն թիվ _____

Ո Ր Ո Շ ՈՒ Մ _____

Պարտապանի դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու մասին

__ _____ 20__ թ. ք. _____

ԴԱՀԿ ծառայության _____ բաժնի _____ /բաժանմունքի/

_____ ուսումնասիրելով __ _____ 20__ թ.
(պաշտոնը, անունը, ազգանունը)

հարուցված թիվ _____ կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

(կատարողական թերթի պահանջը)

_____
_____
_____
_____

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 46, 47 և 67-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. _____ _____ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով,
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

բռնագանձում տարածել պարտապան՝ _____
(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, իրավաբանական անձի անվանումը, ՀՎՀՀ, իրավաբանական անձի գտնվելու վայրը)

_____-ի՝ թիվ _____ հաղորդագրությամբ արգելադրված դրամական միջոցների, ինչպես նաև բանկային հաշիվներում և ավանդներում առկա և մինչև սույն կատարողական վարույթը չարգելադրված, ինչպես նաև հետագայում մուտքագրվող (ներառյալ՝ նոր բացված հաշիվներին կամ ավանդներին) դրամական միջոցների (բացառությամբ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված ենթահաշիվներին մուտքագրվող միջոցների) վրա, որից

_____ _____ ՀՀ դրամը որպես
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

կատարողական թերթով նախատեսված՝ բռնագանձման ենթակա գումար և

_____ _____ ՀՀ դրամը՝ որպես կատարողական ծախսեր:
(գումարը թվերով) *(գումարը տառերով)*

2. Պարտապանի բանկային հաշիվների ներքո բացել ներքին ենթահաշիվներ և դրանք մուտքագրել _____ հաշվի համար(ներ)ից հետագայում
(նշվում է բանկային հաշվի համարները)

ստացվող միջոցները: Սույն կետով նախատեսված ենթահաշիվները սպասարկվում են համապատասխան բանկային կամ այլ հաշվի բացման և սպասարկման պայմանագրի հիման վրա՝ նույն պայմաններով ու կարգով, առանց որևէ լրացուցիչ վճարի գանձման. ընդ որում, ենթահաշիվներին մուտքագրված գումարները պարտապանը կարող է կանխիկացնել կամ այլ կերպ ազատ տնօրինել բանկի և դրա մասնաճյուղերի տարածքում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև համապատասխան բանկային հաշվի համար տրված վճարային քարտի միջոցով (վճարային քարտով վճարումները կարող են իրականացվել բացառապես ենթահաշվի միջոցով):

3. Բանկի անվանումը _____ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական միջոցները փոխանցել _____ գանձապետական բաժանմունքի ԴԱՀԿ_____ բաժնի _____ հաշվին:

4. Եթե սույն կատարողական վարույթի հետ կապված՝ բանկում կան պարտապանի արգելադրված միջոցներ, ապա սույն որոշման 1-ին կետով նախատեսված ընդհանուր գումարը բռնագանձելուց հետո _____ ազատել արգելանքից:

(նշվում է գումարի չափը)

5. Պարտապանի տվյալներում անճշտությունները հայտնաբերելու դեպքում անհապաղ հայտնել ԴԱՀԿ ծառայությանը: Մինչև բռնագանձում տարածելը սույն որոշման մասին պարտապանին տեղեկացնելու դեպքում բանկը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով: Որոշման պատճենը ուղարկել կողմերին, բանկին:

Որոշումը կարող է բողոքարկվել _____ դատարան կամ վերադասության կարգով՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող _____ _____

(անուն, ազգանուն) *(ստորագրություն)*

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ *

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 4-րդ մասերում նշված փորձաքննությունը նշանակելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում ապահովագրական ընկերությունը կամ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոն (այսուհետ՝ Բյուրո) տուժողին կամ նրա իրավահաջորդին յուրաքանչյուր կետանցված օրվա համար վճարում է տույժ՝

1) ապահովագրական հատուցումը վճարելու մասին որոշումն ընդունելու ժամկետները կետանցելու դեպքում՝ ապահովագրական հատուցման գումարի 0.1 տոկոսի չափով,

2) փորձաքննություն նշանակելու, ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշումներն ընդունելու կամ փորձաքննության անցկացման ժամկետները կետանցելու դեպքում՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրով տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0.1 տոկոսի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարցեր են առաջացել կապված նշված դրույթներում տուժող հասկացության միատեսակ ընկալման հետ, և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ստացել է դիմումներ դրանք պարզաբանելու ակնկալիքով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը հարկ է համարել պարզաբանել դրանք:

Վերը նշված դրույթների պարզաբանման նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալին.

1. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ **տուժող** (տուժած անձ) է համարվում ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որը Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: **Տուժող** են համարվում նաև սույն կետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք:

2. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերը նախատեսում են փորձաքննություն (այդ թվում՝ լրացուցիչ փորձաքննություն և կրկնակի փորձաքննություն և փորձագետ) նշանակելու և անցկացնելու, փորձաքննության արդյունքների մասին ծանուցելու, ինչպես նաև ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշումներ ընդունելու և դրանք ապահովադրին, ապահովագրված անձին ու տուժողին (նրա իրավահաջորդին) ուղարկելու ժամկետների վերաբերյալ դրույթները:

3. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

4. Օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2012 թ. սեպտեմբերի 4-ին (ՀՀՊՏ N24 (437), 18.09.2012):

Օրենքի և Օրենսգրքի այս դրույթների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել հետևյալը.

- Ապահովագրական ընկերությունը պարտավորություն է ստանձնում թե՛ ապահովագրական հատուցում վճարելու, թե՛ այդ հատուցման վճարումը մերժելու դեպքում կայացնել որոշում և ապահովադրին, ապահովագրված անձին և տուժողին (նրա իրավահաջորդին) տեղեկացնել իր կողմից կայացված որոշման մասին: Այսինքն՝ որոշում կայացնելը և կայացված որոշման մասին անձին տեղեկացնելը չի կապվում վերջինիս հատուցում վճարելու կամ չվճարելու հետ:
- Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) հանդես է գալիս որպես պարտապան, իսկ որպես պարտատեր հանդես է գալիս հենց այն անձը, ում վերաբերյալ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) օրենքի հիման վրա պարտավորություն է ստանձնել ընդունել ապահովագրական հատուցում վճարելու կամ վճարումը մերժելու, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու մասին որոշում՝ անկախ այն հանգամանքից, թե այդ անձն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով հատուցման իրավունք ունեցող անձ է, թե՝ ոչ:
- Ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցում ստանալու մասին դիմումի մերժումն ինքնին չի նշանակում, որ անձը տուժող չէ: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ նույնիսկ այդպիսի մերժումից հետո անձը կարող է տուժող համարվել, այդ թվում՝ դատարանի (Ֆինանսական համակարգի հաշտարարի) որոշման համաձայն:
- Ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից տուժողին կամ նրա իրավահաջորդին յուրաքանչյուր կետանցված օրվա համար տույժ վճարելու պարտականությունը նախատեսվել է Օրենքում՝ նպատակ ունենալով ապահովագրական ընկերություններին (Բյուրոյին) զերծ պահել կամայական գործելակերպից, ապահովել վերջիններիս պատասխանատվության բարձր զգացումը: Այս ամենը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձը, ում նկատմամբ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) որոշում կայացնելու կամ որոշակի գործողությունների հետ կապված փորձաքննություն նշանակելու և անցկացնելու պարտականություններ է ստանձնել (անգամ, եթե վերջինս տուժող չի հանդիսանում), պետք է հնարավորություն ունենա հստակ պատկերացնել իր նկատմամբ կատարվող գործողությունների ժամկետները: Հետևաբար՝ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) օրենքով նախատեսված իր պարտավորության կատարման կետանցի դեպքում պարտավոր է տույժ վճարել իր պարտատիրոջը, այսինքն՝ այն անձին, ով դիմել է իրեն և ում նկատմամբ ընկերությունը (Բյուրոն) օրենքի հիման վրա կրում է սահմանված ժամկետներում ապահովագրական հատուցում վճարելու, հատուցման վճարումը մերժելու, փորձաքննություն նշանակելու կամ անցկացնելու մասին որոշում կայացնելու պարտավորություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ***պաշտոնապես պարզաբանում է.***

Ապահովագրական ընկերության (Բյուրոյի) կողմից փորձաքննություն նշանակելու կամ անցկացնելու, ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու ժամկետները կետանցելու դեպքում «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տույժը վճարվում է այն անձին, ով դիմել է ապահովագրական ընկերություն (Բյուրո) ապահովագրական հատուցում ստանալու կամ փորձաքննություն նշանակելու համար: Այլ անձի անունից լիազորագրով հանդես գալու դեպքում նշված տույժը վճարվում է լիազորագիր տվողին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
6 սեպտեմբերի 2012 թ., N 9

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 9-ի նիստի «2012 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների,ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 17
Իրական հատվածի ցուցանիշներ 20
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 23
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 28
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 29
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 40
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 60
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 73
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 75
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 81
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (9.10.2012)

2012 թվականի հոկտեմբերի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Ստեփանյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը

Խորհրդի նիստը սկսվեց սեպտեմբերի վերջի դրությամբ իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները:

2012 թ. սեպտեմբերին արձանագրվել է 0.8% գնաճ, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը մնացել է անփոփոխ՝ կազմելով 2.5%, որը տատանումների թույլատրելի միջակայքի ստորին մակարդակն է: Սեպտեմբերին շարունակվել է ամսական գնաճին պարենային ապրանքների գների փոփոխության գերակշռող նպաստման միտումը. ամսական գնաճը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով (նպաստումն ընդհանուր գնաճին՝ 0.53 տոկոսային կետ), որի կառուցվածքում զգալի աճ է դիտվել «Բանջարեղեն և կարտոֆիլ» և «Հացամթերք» ապրանքախմբերի գներում՝ համապատասխանաբար 10.7% և 1.6% (նպաստումը գնաճին՝ 0.67 և 0.17 տոկոսային կետ): Սեպտեմբերին 12-ամսյա բնականոն գնաճը կազմել է 3.1%:

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2012 թվականի հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 8.3%: Անցած 8 ամիսների արդյունքներով տնտեսական ակտիվության աճը գերազանցել է ակնկալիքները՝ պայմանավորված առավելապես արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի թողարկման ծավալների համապատասխանաբար 13.2% և 10.8% աճով: Շինարարության ճյուղի և ծառայությունների ոլորտի թողարկման ծավալների աճը՝ համապատասխանաբար 1.9% և 5.6%, հիմնականում համահունչ էր կանխատեսումներին:

Արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներից 2012 թվականի հունվար-օգոստոսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ) ավելացել է 11.4%-ով, իսկ ներմուծումը (ըստ առևտրի վիճակագրության՝ ՍԻՖ)՝ 3.6%-ով: Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում աճել է տ/տ 8.4%-ով:

2012 թվականի երրորդ եռամսյակի արդյունքներով կպահպանվեն մասնավոր սպառման աճի բարձր տեմպերը՝ 7.8%, իսկ մասնավոր ներդրումների նվազման տեմպերն աստիճանաբար կդանդաղեն՝ 3.8%: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա գնահատվում է զսպող, ինչը որոշ չափով կչեզոքացնի մասնավոր սպառման գնաճային ազդեցությունը:

Խորհրդի նիստում ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները: Սեպտեմբերին ֆինանսական շուկան հիմնականում ցուցաբերել է տոկոսադրույքների կայուն և փոքր-ինչ նվազման միտումներ. սեպտեմբերին միջբանկային ռեպո միջին ամսական տոկոսադրույքը կազմել է 9.43%՝ նախորդ ամսվա 9.91%-ի փոխարեն, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում միջին

տոկոսադրույքը՝ 9.43%՝ 9.42%-ի փոխարեն, բորսայական միջբանկային վարկերի միջին տոկոսադրույքը՝ շուրջ 8.1%՝ 8.0%-ի փոխարեն:

ՀՀ արտարժույթի շուկայում սեպտեմբերին, նախորդ ամսվա միջինի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժևորվել է 0.5%-ով՝ կազմելով 408.6 դրամ, եվրոյի նկատմամբ արժեզրկվել է 2.9%-ով՝ կազմելով 524.5 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 1.0%-ով՝ կազմելով շուրջ 13.0 դրամ:

Սեպտեմբերին ԱՄՆ դոլարն արժեզրկվել է եվրոյի նկատմամբ 3.7%-ով՝ մեկ եվրոյի դիմաց միջինը կազմելով 1.29 (տ/տ արժևորումը՝ 6.8%):

Սեպտեմբերին ձևավորված դրամավարկային միջավայրը հիմնականում համահունչ էր դրամավարկային քաղաքականության երրորդ եռամսյակի ծրագրի բազային սցենարին: Փողի և դրամային զանգվածների 12-ամսյա աճը կազմել է համապատասխանաբար 23.6% և 16.9%, որոնց կառուցվածքում դրամային ավանդների աճը կազմել է տ/տ 22.4%, իսկ արտարժութային ավանդներինը՝ 32.7% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 21.6%): Սեպտեմբերին ևս պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ տ/տ 31.7%, որի կառուցվածքում շարունակել են գերակշռել արտարժույթով տրամադրված վարկերը:

2012 թ. սեպտեմբերին հիմնական հումքային և պարենային ապրանքների միջազգային շուկաներում, ընդհանուր առմամբ, դրսևորվել են թույլ գնաճային միտումներ:

«Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին գինը երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատությամբ, ավելացել է 0.9%-ով (տ/տ նվազումը կազմել է 2.2%), ինչը հիմնականում տեղի է ունեցել առաջին երկու ամիսներին, իսկ սեպտեմբերին դիտվել է որոշակի կայունացում՝ պահպանվելով անփոփոխ մակարդակում: Սեպտեմբերին ոսկու գինն ավելացել է 7.1%-ով (տ/տ նվազումը՝ 1.5%), արդյունաբերական մետաղներից պղնձի գինը՝ 7.6%-ով (տ/տ նվազումը՝ 14%):

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակվող պարենի գների ինդեքսը 2012 սեպտեմբերին նախորդ ամսվա համեմատությամբ աճել է 1.4%-ով (հիմնականում պայմանավորված մսամթերքի և կաթնամթերքի գների աճով), որի պայմաններում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ինդեքսը դեռևս նվազող է՝ 4%: Առաջարկի հետ կապված խնդիրներով պայմանավորված՝ երրորդ եռամսյակում արձանագրվել է ցորենի միջազգային գնի շուրջ 30.0% աճ (տ/տ աճը՝ 10.7%)՝ առավելապես բաժին ընկնելով եռամսյակի առաջին երկու ամիսներին, իսկ սեպտեմբերին ցորենի գինը հիմնականում կայունացել է՝ աճելով ընդամենը 1%-ով: Շաքարավազի և բրնձի միջազգային գները սեպտեմբերին նվազել են համապատասխանաբար 5.0% և 4.5%-ով, որի պարագայում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազումը կազմել է համապատասխանաբար 29.7% և 9.3%:

2012 թ. երրորդ եռամսյակը նշանավորվեց ԱՄՆ-ի և Եվրոպական Միության կողմից տնտեսական աճի խթանմանը և պարտքային հիմնախնդիրների լուծմանն ուղղված տնտեսական քաղաքականության որոշակի քայլերով: Մասնավորապես, ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից իրագործվել է երրորդ քանակական ընդլայնման որոշումը. ևս մեկ տարով՝ մինչև 2015 թ., երկարաձգվել է ցածր տոկոսադրույքների քաղաքականությունը, իսկ ԵԿԲ կողմից իրականացվել է հատուկ պայմաններով երկրորդային շուկայից պարտքային խնդիրներ ունեցող երկրների պարտատոմսերի գնման որոշումը:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդն անդրադարձավ արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումներին, դրամավարկային քաղաքականության ուղղություններին:

Խորհուրդն արձանագրեց, որ չնայած ԱՄՆ-ի և Եվրոպական Միության կենտրոնական բանկերի կողմից իրականացված քայլերին, դեռևս պահպանվում են զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների քաղաքական լուծումների վերաբերյալ անորոշությունները, որի պայմաններում կանխատեսվող հորիզոնում ակնկալվում է համաշխարհային պահանջարկի ցածր մակարդակ: Այդուհանդերձ, պարենային ապրանքների միջազգային շուկայում դեռևս պահպանվում են հիմնարար լարվածությունն ու ձևավորված թույլ գնաճային միջավայրը՝ պայմանավորված ցորենի միջազգային գնի շարունակական աճով: Վերջինիս ազդեցությունը ներքին գների վրա շարունակվել է նաև սեպտեմբերին՝ հանգեցնելով «Հացամթերք» ապրանքախմբի գների աճի:

Խորհուրդը գնահատեց, որ կանխատեսվող հորիզոնում ներքին գների վրա ՀՀ տնտեսության զարգացումներից ակնկալվող ազդեցությունը կլինի գնաճային՝ պայմանավորված մասնավոր սպառման աճի բարձր մակարդակի պահպանմամբ և տնտեսական աճի՝ սպասվածից առավել արագ տեմպերի դրսևորմամբ: Նշված գնաճային գործոնների ազդեցությունը ներքին գների վրա շարունակվելու է որոշ չափով չեզոքացվել հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ:

Թեև տարվա անցած ինն ամիսների արդյունքներով 12-ամսյա գնաճը դեռևս պահպանվում է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանին մոտ մակարդակում, այնուամենայնիվ, կանխատեսվող հորիզոնում արտաքին և ՀՀ տնտեսությունների կողմից ակնկալվում են որոշակի գնաճային ազդեցություններ ներքին գների վրա: Այդ պարագայում Խորհուրդը նպատակահարմար է գտնում պահպանել վերաֆինանսավորման տոկոսադրույքի ներկայիս մակարդակը, որի միջոցով լիովին իրատեսական է կանխատեսվող հորիզոնում 12-ամսյա գնաճը մոտեցնել 4% նպատակային ցուցանիշին՝ $\pm$1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքով:

2012 թվականի հոկտեմբերի 9-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները սահմանվում են համապատասխանաբար 10% և 6%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2012 թ. օգոստոս*	*2012 թ. օգոստոսի իրական աճի հնդեքսը 2011 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*2012 թ. սեպտեմբեր*	*2012 թ. սեպտեմբերի իրական աճի հնդեքսը 2011 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	108.0	-	104.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	93504.3	108.7	94322.1	100.3
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	658.7	103.5	573.9	118.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	140687.3	112.3	178093.5	109.8
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	186238.0	101.6	202036.6	103.9
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	39601.9	96.2	56776.8	105.0
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	84592.9	107.9	85673.3	109.0
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	119583[1]	102.7	120116[2]	102.7

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների հնդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հնդեքս*	*Գների հնդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հնդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	98.1[1]	99.5	101.5
Փետրվար	99.1	103.9[1]	101.2	98.3
Մարտ	100.1	103.4[1]	95.4	98.2
Ապրիլ	99.4	99.9[1]	100.2	98.5
Մայիս	98.7	98.3[1]	100.5	97.5
Հունիս	98.7	102.2	101.4	90.3
Հուլիս	98.5	98.0	99.7	77.5
Օգոստոս	99.6	100.6	101.5	81.2
Սեպտեմբեր	100.8	101.3	100.0	95.5
2012 թ. հունվար – սեպտեմբերը 2011 թ. հունվար – սեպտեմբերի համեմատությամբ	102.3	105.7	96.9	96.8

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]	-0.9	2.6	3.0
Մարտ	0.8	0.8	0.1	2.7	2.2
Ապրիլ	1.3	-0.2	-0.6	2.1	1.9
Մայիս	1.0	0.0	-1.3	0.8	0.5
Հունիս	-0.8	-1.4	-1.3	-0.4	0.7
Հուլիս	-0.8	-3.0	-1.5	-1.9	2.3
Օգոստոս	1.3	-0.6	-0.4	-2.3	2.5
Սեպտեմբեր	-0.2	0.8	0.8	-1.5	2.5
Հոկտեմբեր	1.0	0.3			
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012 թ. սեպտեմբերը 2012 թ. օգոստոսի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**100.8**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**101.0**	**0.54**
Բանջարեղեն և կարտոֆիլ	110.7	0.67
Հացամթերք	101.6	0.17
Կենդանական և բուսական յուղեր	101.5	0.05
Կաթնամթերք	100.4	0.02
Ձու	101.0	0.01
Սուրճ, թեյ, կակաո	100.2	0.01
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**101.5**	**0.24**
Հագուստ և գործվածք	102.0	0.06
Կոշկեղեն	103.0	0.05
Դեղամիջոցներ	101.0	0.02
Լվացող միջոցներ	100.9	0.01
Ծառայություններ, որից՝	**100.1**	**0.03**
Կրթության համակարգի ծառայություններ	104.8	0.05
Բնակարանային, կոմունալ ծառայություններ	99.3	-0.09

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	0.08
Մարտ	1.14	0.82	0.64[4]	0.04
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	0.02
Մայիս	0.41	0.04	0.32[4]	-0.16
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	0.35
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	0.14
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	-0.06
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	0.67
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	4.91
Մարտ	3.33	7.14	5.68[4]	4.27
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	3.81
Մայիս	3.37	5.92	5.75[4]	3.30
Հունիս	3.36	5.40	6.32[4]	3.26
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	3.19
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	2.85
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	3.10
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.10**
Հավի բուդ	0.26
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.20
Բենզին	0.18
Ծխախոտ «Գառնի»	0.18
Կարամել	0.18
Բրինձ	0.12
Ալյուր բարձր տեսակի	0.11
Աղացած սև սուրճ	0.10
Խոզի միս	0.09
Պղպեղ (սև)	0.07
Եփած երշիկ	0.06
Նրբերշիկ	0.06
Բաստուրմա	0.06
Շոկոլադային կրեմ «Նութելլա»	0.05
Մարգարին	0.05

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[3] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամփոփում	*2012 թ. հունվար - օգոստոս (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - օգոստոսը 2011 թ. հունվար - օգոստոսի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար - սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվար - սեպտեմբերը 2011 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	921.4	111.4	1032.0	106.0
Ներմուծում *(ՍԻՖ)*	2686.8	103.6	3009.6	101.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1765.3	100.0	1977.6	98.8

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-սեպտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	958984	132814	826171	1364892	186441	1178451
ԱՄՆ	96596	100261	-3665	138384	145332	-6949
Ուկրաինա	20811	19020	1791	26790	25151	1640
Ղազախստան	16466	1822	14645	23407	2274	21133
Գերմանիա	19461	20006	-545	25601	27604	-2003
Իսպանիա	7357	7744	-387	9891	10142	-252
Ֆրանսիա	13599	17880	-4280	18872	24773	-5901
ԱՄԷ	15682	41158	-25476	19141	57937	-38797
Չինաստան	2681	58995	-56314	3518	83256	-79738
Թուրքիա	3780	26593	-22814	6197	36078	-29881
Այլ երկրներ	225177	154601	70576	323341	224558	98783
Ընդամենը	**1380594**	**580893**	**799701**	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար-սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	148890	27795	121096	1135011	177684	957327
ԱՄՆ	10014	8638	1376	91311	79447	11863
Ուկրաինա	1902	1601	300	15060	14956	104
Ղազախստան	2046	210	1836	18215	1203	17012
Գերմանիա	2663	2388	275	19343	24099	-4756
Իսպանիա	753	1689	-936	5851	8233	-2383
Ֆրանսիա	1617	2733	-1116	13832	16892	-3060
ԱՄԷ	3653	3308	344	16806	36439	-19633
Չինաստան	325	9697	-9372	4740	58574	-53834
Թուրքիա	336	2578	-2242	2239	22030	-19791
Այլ երկրներ	24390	22720	1670	237850	183901	53949
Ընդամենը	**196591**	**83359**	**113232**	**1560258**	**623459**	**936799**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական					
	Հունվար-սեպտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	908121	101183	806938	1295163	141352	1153811
ԱՄՆ	52393	19406	32988	74380	27331	47049
Ուկրաինա	19389	12118	7271	25076	16202	8874
Ղազախստան	14687	1410	13277	20611	1769	18842
Գերմանիա	8075	5113	2962	10695	6905	3790
Իսպանիա	5699	2285	3414	7674	3052	4622
Ֆրանսիա	7717	5611	2107	10874	7668	3206
ԱՄԷ	2403	5432	-3028	3387	7660	-4273
Չինաստան	372	6013	-5641	529	8748	-8219
Թուրքիա	1822	3672	-1850	2136	4981	-2845
Այլ երկրներ	71700	28320	43381	96434	38934	57499
Ընդամենը	**1092379**	**190561**	**901819**	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Սեպտեմբեր			Հունվար-սեպտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	142327	12664	129663	1013501	113845	899656
ԱՄՆ	5337	2352	2984	49787	18072	31715
Ուկրաինա	1721	1217	504	13777	10756	3021
Ղազախստան	1725	163	1562	15218	1094	14124
Գերմանիա	1127	698	428	7747	6062	1685
Իսպանիա	514	1126	-612	4679	2969	1711
Ֆրանսիա	1034	542	492	8124	3763	4361
ԱՄԷ	1963	660	1303	6376	4862	1514
Չինաստան	83	1100	-1017	2678	7980	-5302
Թուրքիա	252	385	-133	1290	2888	-1598
Այլ երկրներ	7991	3921	4070	63403	31402	32001
Ընդամենը	**164075**	**24830**	**139245**	**1186580**	**203694**	**982886**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ)[1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (ինդեքս, 1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	124.9	127.6	126.8	126.6	131.0
